References:

1. Antsupov A. Ya., Shipilov A. I., Konfliktologiya: Uch. Dlya Vuzov, Piter, 2008,
2. Antsupov A. Ya., Baklanovskiy V., Conflict in diagrams and comments: Ouch. Posb-St PETERSBURG, Peter, 2007.
3. Vasilyuk F. E., Problems Of A Critical Situation, Minsk, Kharvest, 1999.
4. Glushchenko B. B., A Management, In The Town Of Zheleznodorozhny, Moscow. Region. Toonz Krill, 1998,
5. Grinev N. N., Conflict Management, Wiley, 2001.
6. Emelyanov S. M., Practicum On Conflictology, St. Petersburg, St. Petersburg, 2001.
7. Kibanov A. Ya., Organization Personnel Management: Textbook: Infra-M., 1997
8. Kozer L., Functions Of Social Conflict, Translated From The English By O. A. Nazarova.-M,:2000.
9. Maksimtseva I. A., Human Resource Management, M., 2012, Wraith,
10. The Problem of the Conflict in Western Sociology /Ed, Ed. A. G. Zdravomyslov, Nizhny Novgorod, 1994.
11. Dictionary of psychology, Academy of pedagogical Sciences. of Sciences of the USSR, the Scientific research Institute of General and educational psychology, M., Pedagogika,
12. A. Babloyan, practical nurses, study, lesson. materials, Yerevan, 2015.
13. Pedagogical Dictionary, Book In / N. Harutyunyan and others, Yerevan, « Bell», Ed. 2018:
14. Nalchajyan A., Psychological dictionary, Luys Publishing House, Yerevan, 1984.
15. Philosophical Dictionary, Tagm. V. H. Baghdasaryan, Yerevan, 1975.

Материал был представлен и отправлен на рецензию: 21.03.2021
Принято к публикации: 30.04.2021
Рецензент: канд. пед. наук, доцент Арусяк Оганисян

The material was submitted and sent to review: 21.03.2021
Was accepted for publication: 30.04.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Arusyak Hovhannisyan

331.538

ԹՎԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԱՆՏՐՈՊՈԼՈԳԻ ՊԱՀԱՆՋԱՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ

Ղազարյան Արևիկ
Երևանի պետական համալսարան, Հայաստան

Համառոտ ներածական: Աշխատաշուկայի գրեթե բոլոր ոլորտների արագընթաց թվայնացումը ձևավորում է ինտեգրալ մասնագիտացումների նոր պահանջարկ: Թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտացումը չորս մանկավարժական գիտաճյուղերի՝ մանկավարժական անտրոպոլոգիայի, թվային մանկավարժության, մանկավարժական դիզայնի և սոցիալական մանկավարժության հատման արդյունքում ձևավորված ինտեգրալ մասնագիտացում է: Աշխատաշուկան ձևավորում է նոր պահանջարկ պրոֆեսիոնալ մասնագետների՝ թվային մանկավարժ-անտրոպոլոգների, որոնք պետք է ապահովեն, այսպես կոչված, «թվային սերնդի» համակարգչային սոցիալականացումը թվային միջավայրում: Առաջին հայացքից շատ պարզ թվացող գործընթացն տեսական և կիրառական մակարդակում ունի արմատական, մեթոդաբանական հրատապ հնչեղություն, որն առնչվում է մարդաբանական ծրագրերի էական փոփոխություններին: Թվայնացման պայմաններում փոփոխված հարացույցի, արժեքային համակար-

գի համաձայն՝ թվային մանկավարժական անտրոպոլոգիայի ուսումնասիրության օյեկտը՝ մարդ+ տեխնիկա/ռուսական հիբրիդային մոդել/ կամ մարդ+արհեստական միջավայրն /ամերիկյան հիբրիդային մոդել/ է, իսկ առարկան՝ համակարգչային սոցիալականացումը:

Բանալի բառեր: Թվային մանկավարժ անտրոպոլոգ, թվային սերունդ, համակարգչային սոցիալականացում, աշխատաշուկա, պահանջարկ-առաջարկ, թվային մանկավարժ անտրոպոլոգի կոմպետենցիաներ:

Հիմնախնդիրը: Աշխատաշուկայի թվայնացումը ձևավորում է նոր պահանջարկ ինտեգրալ մասնագիտացման՝ թվային մանկավարժ-անտրոպոլոգների, սակայն առայժմ բուհերը չեն բավարարում առաջարկը: Հիմնախնդրի կարևորությունը շեշտադրվում է նաև նրանով, որ թվային միջավայրում համակարգչային սոցիալականացման գործընթացն ընթացքի մեջ է, սակայն չկան մասնագետներ, որոնք թվային սերնդի ուսումնառության ընթացքում կապահովեն այդ գործընթացի որակն ու արդյունավետությունը:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Աշխատաշուկայի իրավիճակային վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակությունը գտնվում է կիբերսոցիալականացման պայմաններում [1],[2], որտեղ գերակայող տեխնոլոգիաները թվային են: Ներկայումս հաճախ են շրջանառության մեջ դրվում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են *թվային կրթություն, թվային ուսուցում, թվային դիդակտիկա*: Համակարծիք ենք Ա. Վիրբիցկու [3] այն պնդմանը, թե չկան լիարժեք մեթոդաբանական, պրակտիկ ուսումնասիրություններ, որոնք կփաստեն կրթության թվայնացման առավելությունները, սահմանափակումները և ամենակարևորը՝ հետագա գոյի ապահովման հավանական ռիսկերը: Դժվար է կանխատեսել թվայնացման պայմաններում կրթության զարգացման միտումները, իսկ թվային սերնդի կրթական պահանջմունքներն որակապես տարբերվում են: Կրթությունը՝ որպես սոցիալական ինստիտուտ, կարծես առավել դանդաղ և փուլային է հարմարվում թվայնացմանը, կրթական համակարգը աստիճանաբար դուրս է գալիս դեմ առ դեմ մոդելից: Նկատելի է, որ սոցիալական ագենտները այս պայմաններում դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները տեսական և կիրառական մակարդակում: Թվային սերնդի սոցիալականացումն ապահովում է թվային միջավայրը, որի ներգործությունն անկանխատեսելի հետևանքներ կարող է ունենալ իրական կյանքի և վիրտուալ իրականության միջև:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել թվային մանկավարժ-անտրոպոլոգի պահանջարկվածությունն աշխատաշուկայում՝ քննարկելով նրա աշխատանքային գործունեության հիմնական փուլերը:

Հետազոտության նորույթը: Հիմնավորվում է հետազոտության դրույթը՝ ըստ որի՝ աշխատաշուկայի թվայնացման պայմաններում կրթական թվային միջավայրն ունի պահանջարկ թվային մանկավարժ-անտրոպոլոգների, սակայն դեռևս կրթական ծրագրերի կողմից չկա հստակ առաջարկ մասնագիտացման վերաբերյալ:

Հիմնական նյութի շարադրանքը: Ինչո՞ւ պետք է աշխատաշուկան ներկայացնի պահանջարկ թվային մանկավարժ-անտրոպոլոգի: Քանի որ թվային սերունդն ունի համակարգչային սոցիալականացման ընթացքում առանձնահատկություններ, ապա դրանց անտեսումն արդեն գոյություն ունեցող փաստի, կիանգեցնի մարդու եռամիաս-

նական դիալեկտիկայում զարգացման մակարդակների վերափոխման։ Արդեն իսկ նկատելի է համակարգման և ուղղորդման մասնակի բացթողում, որն էլ իր հերթին հանգեցրել է սոցիալականացման ընթացքում արժեքային համակարգի որակական փոփոխությունների։ Թվային սերունդը վստահ չէ իր վաղվա օրվա նկատմամբ, թուլացել է հավատն ապագայի նկատմամբ։ Հետագայի անկանխատեսելիությունը, անորոշությունը հանգեցրել են նոր կարգախոսի ընտրման՝ «այսո՛ր, ա՛յս պահին, հիմա՛»։ Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ Ա. Վիրբիցկին [3] վերլուծում է թվային սերնդի հետևյալ առանձնահատկությունները.

- ծնված պահից սկսած՝ երեխաներն արտաքին միջավայրի հետ հաղորդակցվում են տեխնոլոգիական միջոցներով՝ բջջային հեռախոսներ, համակարգիչներ,
- դժվարացել է իրական կյանքում ընկերներ ունենալը. վիրտուալ հաղորդակցումը գերակայում է իրական հաղորդակցման նկատմամբ,
- իրական կյանքում խոսքը հաճախ փոխարինվում է տեքստի միջոցով հաղորդակցման,
- չնայած մեծացել է տեղեկատվության ընկալման արագությունը, սակայն սովորողների կենտրոնացումը, ուշադրությունը, հատկապես հիշողությունը թուլացել են,
- սովորողները նախընտրում են հատվածավորված կարճ նյութեր, միաժամանակ նկատվում է մակերեսային մոտեցում խնդիրներին լուծմանը,
- դիտարկումները փաստում են, որ թուլացել է ծնողների հեղինակությունը «ամենակարող և ամենագետ, խորհրդատու» համացանցի համեմատությամբ,
- առաջացել է հոգեբանական, հաղորդակցական մոդելային ճգնաժամ ծնող-երեխա միջանձնային հարաբերություններում։ Ավելին, երեխաները սոցիալական փորձը նույնպես փորձում են ստանալ համացանցից,
- տեղեկատվության ավելցուկի, անկառավարելիության պայմաններում նկատվում է դրական հուզակամային մթնոլորտի իջեցում, որն էլ ազդում է երեխաների նյարդային համակարգի և վարքագծային դրսևորումների վրա,
- երեխաները դժվարությամբ են կողմնորոշվում իրական տարածքներում՝ միկրոմիջավայրում առանց բջջային հեռախոսների ուղղորդման,
- սակավաշարժությունը հանգեցրել է քաշի կտրուկ ավելացմանը և բազմաթիվ հիվանդությունների երիտասարդացմանը։

Համակարծիք լինելով Ա. Վերբիցկու դիտարկումներին՝ կփաստենք հետևյալը՝ թվային սերնդի որակական ֆենոտիպային դրսևորումների պատճառականությունը պետք է տեսնել նաև կենսաբանական ծրագրում փոփոխություններով, որը ժամանակի մարտահրավերներին հարմարվելու մեխանիզմ է։ Հիմնախնդիրն առավել տագնապալի է դառնում, երբ վերլուծում ենք նաև պատմամշակութային ծրագրի փոփոխությունները, ինչպես նաև այդ երկու ծրագրերի հարաբերակցության հարցը։ Պատահական չէ, որ ՌԴ-ում թվայնացման հիմնախնդիրը բարձրացվել է պետական անվտանգության մակարդակի, և տրված է պետական սոցիալական պատվեր՝ թվայնացումը դիտարկել բոլոր ոլորտներում և գտնել հրատապ լուծումներ։

Մարդու սոցիալականացման գործոնները դիտարկելիս ակնառու է դառնում, որ սոցիալական միկրոգործոնները և մեզոգործոնները ներգործում են միջնորդավորված՝ տեխնիկայի կամ արհեստական միջավայրի համադրմամբ։ Որպես անառարկելի միջնորդ հանդես է գալիս թվային միջավայրը՝ համապատասխան օրինաչափություններով և առանձնահատկություններով։ Այսինքն՝ մենք սոցիալականացման հիմնախնդիրը պետք է դիտարկենք երկու փուլով՝ մինչ թվայնացումը և թվայնացումից հետո։

Մինչ թվայնացումն եղած ուսումնասիրություններն ու օրինաչափությունները կարող են ներկայումս չհամապատասխանել իրականությանը: Օրինակ՝ եթե նախկինում սոցիալական ագենտներին մտահոգում էր բակի, փողոցի ներգործությունը երեխայի սոցիալականացման գործընթացի վրա, որտեղ վերահսկողությունը թուլանում էր, սոցիալական դաստիարակությունը դառնում էր տարերային, ապա այժմ երեխաների խաղային գործունեությունը, նաև գործունեության այլ տեսակներ առավելապես իրականացվում են թվային միջավայրում: Երեխաներն իրենց «ընկերներ» կարող են անվանել հասակակիցերի, որոնց երբևէ չեն տեսել, չեն պատկերացնում իրական կյանքում նրանց հետ հաղորդակցման ձևաչափը, բնավորության, վարքագծային դրսևորումները: Այսինքն՝ իրական կյանքի իրավիճակային մոդելները, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց իրական աշխարհը ճանաչելու, ունենալու կոնկրետ խնդիրներ լուծելու, կոնֆլիկտները հաղթահարելու կարողություն, սահմանափակվում են: Քանի որ ստեղծված իրավիճակից հետընթաց հնարավոր չէ (բացառությամբ այն իրավիճակի, երբ չգործի թվային միջավայրը, չլինեն թվային գործիքները), նշանակում է թվայնացման նոր պայմաններում անհրաժեշտ են համակարգված մեթոդաբանական, խորը գիտատեսական և պրակտիկ ուսումնասիրություններ: Այս տեսանկյունից կարևորվում է նպատակային (ըստ աշխատաշուկայի դասակարգման) աշխատաշուկայի պահանջարկը նոր մասնագիտացումների՝ այդ թվում նաև թվային մանկավարժ-անտրոպոլոգի:

Ինչպե՞ս պետք է աշխատի թվային մանկավարժ-անտրոպոլոգը: Հիմք ընդունելով շուկայագիտության կառավարման երեք հիմնական ուղղությունները՝ գործունեության կառավարում, ֆունկցիայի կառավարում և պահանջարկի կառավարում [5, 21]՝ անհրաժեշտ է սկսել նոր «մտածելակերպի» ձևավորումից, որի ուղղվածությունը տանում է դեպի աշխատաշուկան: Պետք է հստակեցնել, թե որ ոլորտներում պետք է աշխատի թվային մանկավարժ-անտրոպոլոգը: Կարծում ենք՝ նրա գործունեության հիմնական ոլորտներն են՝

ընտանիքը ՝ երկու բաղադրիչով: Առաջին բաղադրիչը խորհրդատվական է՝ աշխատանք ծնողների հետ՝ ձևավորելով և բարձրացնելով ծնողների իրազեկվածությունն ու գրագիտությունը թվային միջավայրի, թվային գործիքակազմի, տեխնոլոգիաների վերաբերյալ: Տրվում են համապատասխան գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, որոնք հնարավորություն կտան աջակցելու, օգնելու երեխային՝ թվային միջավայրում ծագող խնդիրները լուծելու: Երկրորդ բաղադրիչը ախտորոշող, կանխատեսող և կանխարգելող մասնագիտական աջակցությունն է, երբ երեխան ունի արդեն թվայնացման վերաբերյալ գիտելիքներ, այսինքն՝ թվային սոցիալականացումը սկսվել է, սակայն տարերային է, անհրաժեշտ է նպատակային ներգործություն գործընթացի վրա: Հնարավոր է, որ թվային միջավայրը գերակայող չլինի. նշանակում է պետք է ապահովել թվային ուսուցում՝ հաշվի առնելով երեխայի տարիքային, սեռային, անհատական առանձնահատկությունները:

Կրթօջախներ: Քանի որ արդեն իսկ խոսում ենք թվային դիդակտիկայի մասին, ենթադրվում է, որ առարկայական ուսուցիչները սովորողների ուսումնառության ընթացքում պետք է ապահովեն ուսուցման գործընթացի սահուն թվայնացումը: Մենք թվային մանկավարժ-անտրոպոլոգի գործունեությունը տեսնում ենք արտալսարանային պայմաններում: Նա պետք է ապահովի համակարգչային, մշակութադերային սոցիալականացումը թվային միջավայրում: Թվային մանկավարժ-անտրոպոլոգի գերակա խնդիրն են դառնում թվային միջավայրում նշանամշակութային ծրագրի կարգավո-

ռումները՝ դաստիարակության բաղադրիչներին համապատասխան։ Նախատեսվում է թվային մանկավարժ-անտրոպոլոգի աշխատանքը երկու ուղղությամբ՝ խմբային և անհատական աշխատանք։ Խմբային աշխատանքների կազմակերպման ընթացքում կարելի է համագործակցել ծնողների և առարկայական ուսուցիչների հետ, անհատական աշխատանքները պետք է կազմակերպել՝ անհատական թվային քարտեզագրում իրականացնելով և ախտորոշման քարտեր կիրառելով։ Թվային մանկավարժ-անտրոպոլոգի աշխատանքի գործունեության արդյունավետության երաշխիքը նրա մանկավարժական անտրոպոլոգիայի օրինաչափությունների, երեք խումբ հիմնախնդիրների իմացությունն է [6,134], որը հնարավորություն կտա ախտորոշելու մանկավարժական անտրոպոլոգիական ամբիվալենտականությունը։

Մշակութային ինստիտուտներ։ Մասնագետների կարծիքով (Ա. Վերբիցկի, Ն. Բագատիր) կիբերսոցիալականացման պայմաններում չլուծված խնդիրներ, դժվարություններ կառաջանան դերամշակութային սոցիալականացման ընթացքում։ Մշակույթի բազմաշերտությունը, խորությունը, ծավալը պետք է ծրագրավորել և պլանավորել, որ հասանելի դառնան սովորողի համար։ Այս աշխատանքները նույնպես պետք է համակարգի թվային մանկավարժ-անտրոպոլոգը, ըստ որում՝ պահպանելով համամարդկային և ազգային արժեքների հարաբերակցության համամասնությունը։ Պլանավորման և վերահսկողական գործառույթներ իրականացնելիս պետք է նկատի ունենալ, որ թվայնացումը հանգեցրել է ժամանակի, տարածքի, հեռավորության, ռեսուրսի օգտագործման հնարավորությունների ընդլայնման, սահմանափակումների վերացման։

Հատուկ հաստատություններ։ Սահմանափակ կարողություններով երեխաների համակարգային սոցիալականացումը ապահովելու ընթացքում հաշվի են առնվում խնդրի առանձնահատկությունները, կանխատեսվող վերջնարդյունքները։

Թվային մանկավարժ-անտրոպոլոգը տարբեր ոլորտներում աշխատելիս ընտրում է համապատասխան գործիքակազմ, այդ թվում՝ նաև օգտագործելով մանկավարժական դիզայնի տեխնոլոգիաներն ու թվային գործիքները, համացանցի հնարավորությունները [7,42]։

Թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտական զարգացումը առավել արդյունավետ կլինի, եթե այն հիմնվի երկու ռազմավարությունների վրա. «Սովորել՝ ինչպես սովորել» և «Սովորել՝ ինչպես սովորեցնել» [8, 398]։ Քանի որ թվային միջավայրը զարգանում է արագընթաց և անհրաժեշտություն կառաջանա պարբերաբար հարստացնել գիտելիքները, կարողությունները և հմտությունները, թվային մանկավարժ-անտրոպոլոգը պետք է համընթաց լինի փոփոխվող պահանջներին, հետևաբար չպետք է դադարի սովորելուց։ Երկրորդ ռազմավարությունը հնարավորություն կտա, ստուգելով սովորածի որակը, այն դնել շրջանառության մեջ՝ «սովորեցնելով»։ Որքան արագընթաց զարգանում են թվային մանկավարժությունը, մանկավարժական դիզայնը, մանկավարժական անտրոպոլոգիան, այնքան մեր կարծիքով ավելանում է աշխատաշուկայում թվային մանկավարժ- անտրոպոլոգի մասնագիտացման պահանջարկը։

Տարբեր սոցիալական դեր կատարող, զբաղվածություն, սեռ, թվային գործիքների կիրառման հմտություններ ունեցող 60 ծնողների շրջանում առցանց հարթակում անցկացված զրույցները թույլ են տալիս եզրահանգել, որ ծնողներից 36-ը նույնպես կարծում է, որ հարկ կա թվային մանկավարժ-անտրոպոլոգի մասնագիտացման, իսկ 24 ծնող մերժում է մասնագիտացումը։ Ուշագրավ է, որ նրանցից 17-ը արական սեռի ներկայացուցիչներ են, որոնք, ինչպես պարզվեց, մասնագիտությունից ելնելով, ուղղա-

կի առնչվում են հիմնախնդրին և գերազանց տիրապետում են (իրենց բնութագրմամբ) թվային գործիքներին: Նրանց կարծիքով տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և թվայնացումը կստիպեն, որ երեխաները տիրապետեն և աստիճանաբար կողմնորոշվեն թվային միջավայրում: Նրանց բնութագրմամբ «չկա ապագա՝ առանց թվայնացման, թվայնացումը կյանքի իմաստ է»: Մեր այն հարցադրմանը, թե բացառում եք բացասական ներգործությունը և համակարգչային սոցիալականացման ընթացքում տարաբնույթ շեղումները: Տրվեց գրեթե համանման բովանդակությամբ պատասխան. դա անխուսափելի է, քանի որ տեղեկատվական դաշտը վերահսկելի չէ, անգամ մեծ ցանկության դեպքում: Մասնագիտացումը մերժող 7 կանանց պատասխաններում շեշտադրվում էր առանցքային այն միտքը, որ եթե լինի մասնագիտական աջակցություն, ապա երեխաները կկորցնեն մոտիվացիան, և կկորչի ժամանցը կազմակերպելու ցանկությունը: Նրանց կարծիքով թվային խաղային տեխնոլոգիաներն են, որ հնարավորություն են տալիս լցնելու ժամանակը: Մեր այն հարցադրմանը, թե արդյոք առողջական խնդիրներ նկատել եք: Պատասխանը ներկայացվեց՝ հիմքում դնելով տնտեսական գործոնը՝ ըստ որի՝ քիչ ծախսատար է, քան մյուս սպորտային խմբերն ու ժամանցի կենտրոնները: Նրանցից 4-ը նշել, որ եթե փոքր տարիքից տիրապետեն, ապա հավանականություն, որ հետագայում կունենան լավ աշխատանք, երաշխավորված է: Տարաբնույթ պատասխանները արդեն իսկ փաստում են, որ սոցիումում ընթանում են *խնդրի վերաբերյալ կանխորոշում* և *աշխատանքային վարկածի ձևավորում*: Շուկայագիտության պահանջարկի ձևավորման նախնական երկու կարևոր փուլերն են: Կարծում ենք, որ դրանց կհաջորդեն աշխատաշուկայի պահանջարկի ձևավորման մյուս փուլերը, ինչը հնարավորություն կտա կանխատեսելու հիմնախնդրով պայմանավորված ռիսկերը, և առաջնային պահանջարկը կվերածվի կրկնակի պահանջարկի: Առաջնայինը աշխատաշուկայում նոր հայտնված մասնագիտացման նկատմամբ պահանջարկն է, իսկ կրկնակի պահանջարկը մասնագիտացման նկատմամբ հակումն է: Առաջարկում ենք, որ եթե շուկան կրկնակի պահանջարկ ներկայացնի, ապա մագիստրոսական ծրագրում տալ մասնագիտացում՝ թվային մանկավարժ-անտրոպոլոգի համապատասխան դասընթացներ ներառելով կամ վերապատրաստել սոցիալական մանկավարժներին, քանի որ բակալավրիատի ծրագրային բովանդակությունը համապատասխանում է, սակայն ավելացնել դասընթացներ՝ թվային մանկավարժություն, մանկավարժական դիզայն, թվային ժամանցի մանկավարժություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Воинова О. И., Плешаков В. А., Киберонтологический подход в образовании. Монография / Под ред. В.А. Плешакова. – Норильск: Норильский индустриальный институт, 2012.
2. Воинова О. И., Плешаков В. А., Личность и киберсоциум: становление киберсоциальности и классификация людей по степени интегрированности в киберсоциум // Электронный научно-публицистический журнал «Homo Cyberus». 2018. № 1(4). [Электронный ресурс] URL: http://journal.homocyberus.ru/personality_and_cybersocium_formation_of_cybersafty_and_classif
3. Вербицкий А. А., Цифровое обучение: проблемы, риски и перспективы //Электронный научно-публицистический журнал «HomoCyberus».- 2019. — №1(6). [Электронный ресурс] – Режим доступа: http://journal.homocyberus.ru/Verbitskiy_AA_1_2019.
4. Калимуллина О. В., Троценко И. В., Современные цифровые образовательные инструменты и цифровая компетеность: анализ существующих проблем и тенденций // Открытое образование. 2018. №3, с. 63-71.
5. Սարգսյան Կ., Մարքեթինգի կառավարում, Երևան, 2017, 21 էջ:
6. Бим-Бад Б. М., Педагогическая антропология, М., 2016, 223 с.
7. Богатырь Н., Сетевой анализ в антропологии, М., 2015, 35-42с.

8. Խաչատրյան Ռ., Բուդաղյան Ա., Շահինյան Ա. և ուրիշներ, Մարդկային ռեսուրսների կառավարումը, Երևան, 2012., էջ 398:

ВОСТРЕБОВАННОСТЬ ЦИФРОВОГО ПЕДАГОГА-АНТРОПОЛОГА НА РЫНКЕ ТРУДА

Аревик Казарян
ЕГУ, Армениа

Аннотация

Ускорение оцифровки почти всех сфер рынка труда формирует новый спрос на интегральные специализации. Специализация цифрового педагога-антрополога – это интегрированная специализация, сформировавшаяся в результате пересечения четырех педагогических отраслей: педагогической антропологии, цифровой педагогики, педагогического дизайна и социальной педагогики. Рынок труда формирует спрос на профессиональных специалистов, а именно цифровых педагогов-антропологов, которые должны обеспечить компьютерную социализацию так называемого «цифрового поколения» в цифровой среде. Кажущийся на первый взгляд очень простым процесс на теоретическом и практическом уровне имеет радикальное, методологическое звучание, касающееся существенных изменений антропологических программ. Согласно изменениям в условиях оцифровки, связанных с парадигмой и системой ценностей, объектом исследования цифровой педагогической антропологии является человек + техника (русская гибридная модель) или человек + искусственная среда (американская гибридная модель), а предметом – компьютерная социализация. Оцифровка рынка труда формирует новый спрос на интегральную специализацию педагогов-антропологов. Однако вузы все еще не удовлетворяют спрос. Важность проблемы акцентируется на том, что протекает процесс компьютерной социализации в цифровой среде находится в процессе, однако нет специалистов, которые в ходе обучения цифрового поколения обеспечат его качество и эффективность. Поскольку цифровое поколение в процессе компьютерной социализации имеет свои особенности, то их игнорирование их приведет к трансформации уровней развития в трехсторонней диалектике человека. Уже можно заметить частичное упущение координации и направления, что, в свою очередь, привело к качественным изменениям системы ценностей в ходе социализации. Цифровое поколение не уверено в своем завтрашнем дне, ослабела вера в будущее. Непредсказуемость и неопределенность будущего привели к выбору нового лозунга: «Сегодня, на данный момент, сейчас».

В ходе проведенного исследования становится ясно, что в социуме идет предопределение проблемы и формирование рабочей версии. Это первые два важных этапа формирования спроса на маркетинг. Считаем, что за ними последуют другие этапы формирования спроса на рынке труда, что даст возможность прогнозировать обусловленные проблемой риски и первичный спрос превратится в двойной спрос. Первичным является спрос на только появившуюся новую специализацию на рынке труда, а двойным спросом – склонность к специализации.

Таким образом, мы предлагаем следующее: если рынком будет предложен двойной спрос на данную специализацию, то в магистерской программе необходимо открыть специализацию, включив в нее соответствующие курсы цифрового педагога-антрополога или курсы переподготовки социальных педагогов, поскольку программное содержание бакалавриата соответствует ей, но необходимо добавить к ней также прохождение следующих курсов: цифровую педагогику, педагогический дизайн, цифровую педагогику досуга.

Ключевые слова: цифровой педагог-антрополог, цифровое поколение, компьютерная социализация, рынок труда, спрос-предложение, компетенции цифрового педагога-антрополога.

Список использованной литературы

1. Воинова О. И., Плешаков В. А., Киберонтологический подход в образовании. Монография / Под ред. В.А. Плешакова. – Норильск: Норильский индустриальный институт, 2012.
2. Воинова О. И., Плешаков В. А., Личность и киберсоциум: становление киберсоциальности и классификация людей по степени интегрированности в киберсоциум // Электронный научно-публицистический журнал «Homo Cyberus». – 2018. – № 1(4). [Электронный ресурс] URL: http://journal.homocyberus.ru/personality_and_cybersocium_formation_of_cybersafty_and_classif
3. Вербицкий А. А., Цифровое обучение: проблемы, риски и перспективы //Электронный научно-публицистический журнал «HomoCyberus».- 2019. — №1(6). [Электронный ресурс] – Режим доступа: http://journal.homocyberus.ru/Verbitskiy_AA_1_2019

4. Калимуллина О. В., Троценко И. В., Современные цифровые образовательные инструменты и цифровая компетеность: анализ существующих проблем и тенденций // Открытое образование. – 2018. – №3. – С. 63-71

5. Саргсян К., Управление маркетинга, Ереван, 2017, 21 стр.

6. Бим-Бад Б. М., Педагогическая антропология, М., 2016. — 223 с

7. Богатырь Н., Сетевой анализ в антропологии, М., 2015, 35-42ст.

8. Хачатрян Р. Дж., Будагян А., Шагинян А. и др., Управление человеческими ресурсами, Y, 2012, стр. 398

THE DEMAND FOR A DIGITA L PEDAGOG-ANTHROPOLOGIST IN THE LABOR MARKET

Arevik Ghazaryan
YSU, Armenia

Summary

The acceleration of digitization of almost all areas of the labor market creates a new demand for integrated specializations. The digital teacher-anthropologist specialization is an integrated specialization formed as a result of the intersection of four pedagogical faculties: pedagogical anthropology, digital pedagogy, pedagogical design, and social pedagogy. The labor market creates a new demand for professional specialists-digital pedagogues-anthropologists, who must ensure the computer socialization of the so-called "digital generation" in the digital environment. The seemingly very simple process at the theoretical and practical level has a radical, methodological sound, concerning significant changes in anthropological programs. The object of research in digital pedagogical anthropology is man + technology (Russian hybrid model) or man+artificial environment (American hybrid model), and the subject is computer socialization. Digitization of the labor market creates a new demand for integrated specialization-digital teachers-anthropologists, but so far universities do not meet the supply. The importance of the problem is also emphasized by the fact that the process of computer socialization in the digital environment is in progress, but there are no specialists who will ensure the quality and efficiency of this process during the training of the digital generation. Since the digital generation has features in the process of computer socialization, ignoring them will lead to the already existing fact of transformation of the levels of development into the three-hundred-year-old dialectic of man. A partial lack of coordination and direction is already noticeable, which, in turn, led to qualitative changes in the value system during socialization. The digital generation is not confident in its future, and faith in the future has weakened. The unpredictability and uncertainty of the future led to the choice of a new slogan: "today, at the moment, now": In the course of the conducted research, it becomes clear that in society there is a predestination of the problem and the formation of a working version. These are the first two important stages of creating demand for marketing. We believe that they will be followed by other stages of demand formation in the labor market, which will make it possible to predict the risks caused by the problem and the primary demand will turn into a double demand. The primary demand is for the newly emerging specialization in the labor market, and the dual demand is the propensity to specialize. We suggest that if the market will have a double demand, then in the master's program to give specialization, including or training social educators appropriate courses of digital teacher-anthropologist, since the program content of the bachelor's degree corresponds, but adding courses: digital pedagogy, pedagogical design, digital pedagogy.

Keywords: Digital teacher-anthropologist, digital generation, computer socialization, labor market, supply and demand, competence of a digital teacher-anthropologist.

References:

1. Voinova O. I., Pleshakov V. A., Cyberontological approach in education. Monograph / Under ed. B.A. Pleshakova. - Norilisk: Norilia Industrial Institute, 2012.

2. Voinova O. I., Pleshakov V. A., Personality and Cybersocium: Retirement of cybersocialities and classification of people by degrees of integration into cybersocium // Electronic scientific-journalistic journal «Homo Cyberus». - 2018. - № 1 (4). [Йлектронный ресурс] URL: http://journal.homocyberus.ru/personality_and_cybersocium_formation_of_cybersafty_and_classif

3. Verbitskiy A. A., Digital training: Problems, risks and perspectives // Electronic scientific-journalistic journal «HomoCyberus» .- 2019. - №1 (6). [Electronic resource] - Available mode: http://journal.homocyberus.ru/Verbitskiy_AA_1_2019

4. Kalimullina O. V., Trotsenko I. B., Modern numerical educational instruments and digital competence: analysis of existing problems and tendencies // Discover education. - 2018. - №3. - С. 63-71:
5. Sargsyan K., Marketing Department, Yerevan, 2017, 21 pp.
6. Bim-Bad B. M., Pedagogical Anthropology, Moscow, 2016. - 223 p.
7. Bogatyr N., Network analysis in anthropology, M., 2015, 35-42st.
8. Khachatryan R. J., Budagyan A., Shahinyan A. et al., Human Resource Management, Y, 2012, p. 398.

Материал был представлен и отправлен на рецензию: 24.03.2021
Принято к публикации: 07.04.2021
Рецензент: доктор пед.наук, проф. Айк Петросян

The material was submitted and sent to review: 24.03.2021
Was accepted for publication: 07.04.2021
Reviewer: Doctor of Sciences, Prof. Hayk Petrosyan

378(44):378(495)

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ УПРАВЛЕНИЯ СИСТЕМАМИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ ФРАНЦИИ И ГРЕЦИИ

Аветисян Мери
Ереванский государственный университет,
Армения

Краткое введение. Изменение, реформирование и усовершенствование высшего образования любой страны является одним из основных факторов его успешного развития. В представленной статье показаны особенности и характерные черты управления системами высшего образования двух европейских стран – Франции и Греции, одновременно отмечены сходства и различия их структуры, организации учебного процесса и его продуктивности.

Ключевые слова: система высшего образования, органы управления образованием, финансирование, оценивание, кредитная система, поступление, структура высшего образования, бесплатное обучение.

Проблема. Высшее образование является одной из главных движущих сил развития прогрессивного общества. И поэтому, показывая и сравнивая характерные особенности систем управления этих двух стран (Франции и Греции), можно найти пути правильного разрешения образовательных проблемных ситуаций.

Анализ актуальных исследований и публикаций, связанных с проблемой. Вопросы систем высшего образования ряда стран привлекают многих исследователей, что приводит к их изучению и проведению сравнительного анализа. В решении этих проблем активное участие принимают такие педагоги-ученые как Н.К. Арутюнян, С. Вардумян, К.А. Салимова, Н.Л. Додде, В.А. Капранова, З.А. Малькова, Б.Л. Вульфсон, В.М. Филиппов и др.

Цель исследования, проведенного в рамках статьи. Целью данного исследования является подробное рассмотрение управление системами высшего образования Франции и Греции и проведение их сравнительного анализа.

Новизна исследования. Новизна исследования заключается в изучении и проведении сравнительного анализа управления системами высшего образования Франции и Греции с представлением в виде таблиц их сходств и отличий.

Управление и структура системы высшего образования Франции.

Система высшего образования Франции отличается своим высоким уровнем образования в различных регионах, своей многопрофильностью и разновидностью профессий.